«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ինտեգրված պարապմունքների կազմակեպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Դաստիարակ՝ Մանելյա Գասպարյան

Մանկապարտեզ՝ «Սիսիան համայնքի թիվ 2 ՆՈՒՀ » ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Բովանդակություն---------- 2

Ներածություն----------3

Առաջին գլուխ

Ինչպիսի պարապմունքի տեսակ է ինտեգրված պարապմունքը-----4

Երկրորդ գլուխ

Ինտեգրված պարապմունքի ընթացքում կիրառվող մեթոդները-----7

Պարապմունքի պլան----------9

Դիտորդների վերլուծություն----------13

Եզրակացություն----------14

Գրականության ցանկ----------15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից դիդակտիկան նախատեսում է ակտիվ ուսուցման մեթոդների կիրառում, որի նպատակն է. <<Սովորեցնել սովորել>>: Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ, որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը: Փոքրիկը, ով մտնում է ՆՈՒՀ, ունի որակյալ կրթություն ստանալու իրավունք: Եվ մեկն է նպատակը՝ դաստիարակել համակողմանի ու ներդաշնակ զարգացած անձ: Մանկավարժը կոչված է իրականացնելու մի շարք մասնագիտական գործառույթներ: Այդ գործառույթներից կարևորվում է ուսումնական պարապմունքների կազմակերպումը մանկավարժական գործընթացում: Այդ իսկ պատճառով ստեղծվել են ինտեգրված և համալիր պարապմունքներ, որոնք ժամանակակից ուսուցման մեթոդների նորույթներից մեկն են: Այս տիպի պարապմունքները կարելի է անցկացնել տարբեր ուսումնական բաղադրիչներից:Ինտեգրված պարապմունքի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց: Տարբեր է նաև ինտեգրված պարապմունքի տևողությունը: Բայց առավելաբար օգտագործում են երկու կամ երեք պարապմունքի ժամ՝ միավորված մեկ պարապմունքի մեջ: Ցանկացած ինտեգրված պարապմունք նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից՝ ընդլայնել ինֆորմացիան, խորացնել հասկացողությունը, ընդհանրացնել թեման, համակարգել ուսումնասիրված նյութը:

Ինտեգրված պարապմունքում մեկ խնդիր լուծվում է տարբեր տեսակի գործողությունների ինտեգրմամբ:

Հետազոտական աշխատանքի *նպատակն* է՝ նշել ինտեգրված պարապմունքների կազմակերպման ձևերը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում:

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

1.ԻՆՉՊԻՍԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՏԵՍԱԿ Է ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԸ

«Ինտեգրում» (Integr-ամբողջ)- լատիներենից թարգմանաբար նշանակում է՝ վերա-կանգնում, համալրում, մասերի միավորում մեկ ամբողջի մեջ՝ ոչ թե մեխանիկորեն, այլ փոխադարձ ներթափանցմամբ: Նշանակում է համատեղել գիտելիքները տարբեր կրթական ոլորտներից հավասար հիմունքներով՝ լրացնելով միմյանց (երաժշտության, գրականության, նկարչության ստեղծագործությունների միջոցով այնպիսի հասկացության դիտարկում, ինչպիսին է «տրամադրությունը»):

Ինտեգրված պարապմունքը պարապմունքի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի պարապմունքի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված պարապմունքը կարող են միավորել ինչպես տարբեր ուսումնական բաղադրիչներ իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին ուսումնական բաղադրիչի մեթոդներ: Ինտեգրված պարապմունքները հնարավորություն են տալիս ձևավորելու հստակ պատկերացումներ ուսուցանվող նյութի մասին, արթնացնում են հետաքրքրություն առարկայի նկատմամբ: Ինտեգրված պարապմունքի համար կարևոր է նյութի ընտրությունը, ուսումնական միջոցների բազմազանությունը. ոչ բոլոր պարապմունքը կարելի է անցկացնել ինտեգրված մեթոդներով: Կարևոր է նաև ինտեգրված պարապմունքն անցկացնողի պատրաստվածությունը, հոգեբանական համատեղելիությունը:

Արդի ժամանակաշրջանի ուսուցման առանձնահատկություններից է գիտելիքների

ինտեգրման միտումը: Ուսուցումը անձնավորության գիտակցությունը ձևավորելու և զարգացնելու հատուկ կազմակերպված գործընթաց է: Այն իրականանում է ուսուցման տարաբնույթ մեթոդներով, որը որոշակիորեն կարգավորված գործունեություն է՝ մանակավարժի և սովորողի ուսուցման նպատակներին ուղղված:

Այժմ խիստ կարևորում է, ոչ միայն սաների, այլև դաստիարակների մասնագիտական ու որակական կարողությունները: Ինտեգրման խնդիրը ոչ միայն մի քանի գիտությունների ուսումնառության ընդհանուր տիրույթների ցուցադրումն է, այլև դրանց

կապի միջոցով շրջակա աշխարհի միասնականության ցուցադրումը:

Փաստորեն, դաստիարակությունը չափազանց պատասխանատու գործընթաց է: Եվ հարկ է հիշել Պիկարևի հայտնի խոսքերը. <<Դաստիարակության մեջ ամբողջ խնդիրը նրանում է, թե ով է դաստիարակը>>:

Երեխային ուղղորդելու համար անհրաժեշտ է հասկանալ նրան, գիտակցել,որ փոքրիկ մարդուկն ունի կարծիքն ազատ արտահայտելու իրավունք, կասկածելու, որոշումներ կայացնելու իրավունք:

Եվ հմուտ մանկավարժը պետք է սիրի և զգա երեխային ամբողջ սրտով, վստահի և հավատա նրան:

Ինտեգրված պարապմունքները ապահովում են երեխայի մտավոր,սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի զարգացումը: Ինտեգրված պարապմունքներում կարևորվում են գործունեության այն ձևերը, որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն,նախաձեռնողականություն,համագործակցություն,հնարամտություն,ան ձնական կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում: Համալիր և ինտեգրված պարապմունքների ընթացքում դաստիարակը գիտակցաբար այնպես է անում, որ երեխաները զգան մեծահասակների հոգատարությունը, շահագրգռվածությունը իրենց դաստիարակության հարցում:Ինտեգրված ուսուցման առավելությունն այն է, որ ծնողները ներգրավվում են տարբեր աշխատանքների մեջ և տեղյակ են, թե ինչ են անում իրենց երեխաները: Երբ ինտեգրված ուսուցումը մանրակրկիտ պլանավորվում է և իրականացվում, երեխաները՝

♦ հոգատար են միմյանց նկատմամբ,

♦ հետաքրքիր կապեր են ստեղծում,

♦ կատարելագործում են իրենց շփման և երկխոսության հմտությունները:

Ինտեգրված ուսուցումը ենթադրում է տարբեր մեթոդիկաների

փոխկապակցվածություն, այսինքն՝ որևէ թեմա ուսումնասիրելիս ամփոփվում

են հարցեր տարբեր մեթոդիկաներից, և երեխաները հասկանում են այդ

մեթոդիկաների փոխկապակցվածությունը: Երեխաներին առաջարկվում

են հետաքրքրիր թեմաներ կենսական հարցերի շուրջ: Ուսումնասիրվող

թեմայի մեջ երեխաների հետաքրքրություններին հիմնական տեղ հատկացնելով՝ ապահովվում է երեխաների շահագրգռվածությունն ու հետաքրքրասիրությունը թեմայի նկատմամբ:

Ինտեգրված պարապմունքը կառուցվում է մեկ թեմայի բովանդակության շուրջ, հստակեցվում են առաջադրանքները պարապմունքի յուրաքանչյուր փուլում, իրականացվում է ընդհանուր բովանդակությամբ հասկացությունների հաջորդական ընկալում: Երեխաների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման, ինչպես նաև ճանաչողական գործունեության ակտիվացման նպատակով ինտեգրված պարապմունքների ընթացքում կիրառվում են տարբեր մեթոդներ, դաստիարակը օգտվում է նաև տարբեր միջոցներից: Մանկապարտեզի մանկավարժական գործընթացում կազմակերպվող պարապմունքները՝ մասնավորապես ինտեգրված պարապմունքները, ունեն և՛ ուսուցողական, և՛ դաստիարակչական բնույթ: Օրինակ,

Մարտի 8-ին նվիրված պարապմունքի ընթացքում երեխաները ոչ միայն սովորում են արտահայտիչ ներկայացնել ոտանավորը, նկարել ծաղիկներ, ճանաչել այդ ծաղիկների հատկանիշները, այլև ընկալում են մայրիկների տոնի գաղափարը, ծաղիկներ նվիրելու անհրաժեշտությունը, հաճույքը և այլն:

2. ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ինտեգրված պարապմունքների ընթացքում կիրառվում են ինտերակտիվ մեթոդներ՝

մտագրոհ, դերային խաղ, ենթախմբերի բաժանում,

բանավեճ և այլն: Օրինակ, «Աշուն» թեմայով պարապմունքի սկզբին

դաստիարակը մտագրոհի կիրառմամբ աշնան վերաբերյալ տարաբնույթ

հարցերի միջոցով երեխաներին մղում է պարապմունքի բովանդակային

ընկալմանը, այնուհետև աշնանային որևէ մեղեդու հնչյունների տակ

երեխաները արտասանում են իրենց իմացած ոտանավորներից, որից հետո ուսուցանվում է նոր նյութը: Պարապմունքի ավարտին դաստիարակը կարող է առաջարկել նկարել աշուն պատկերող ընդհանուր նկար, որին կմասնակցեն բոլոր երեխաները՝ յուրաքանչյուրը որևէ դետալ ավելացնելով և համագործակցելով միմյանց հետ: Պարապմունքի ընթացքում անհրաժեշտ է ստեղծել ջերմ հուզական մթնոլորտ, ընդգրկել բոլոր երեխաներին և ակտիվացնել՝ նրանց մեջ հետաքրքրություն առաջացնելով թեմայի վերաբերմամբ և նպաստել երեխաների երևակայության զարգացմանը, ստեղծագործական կարողությունների ձևավորմանը:
«Ճանապարհորդություն նավով» ինտեգրված պարապմունքի ժամանակ երեխաները կարող են կառուցողական նյութերով և աթոռակներով նավ պատրաստել (աշխատանքային գործունեություն) և ճանապարհորդության ընթացքում ծանոթանալ ջրի հատկություններին, ջրում կենդանիներին, բուսականությանը, տարրական գիտելիքներ ձեռք բերել նավի մասին և այլն:
Պարապմունքի վերջում կարելի է առաջարկել երեխաներին՝ նկարել ջրի հատակը (կերպարվեստային գործունեություն): Նշված պարապմունքի ընթացքում ձևավորվում են երեխայի հոգեկան գործընթացները՝ հիշողություն, ուշադրություն. մտածողություն, երևակայություն, խոսք, ապահովվում են միջառարկայական կապերը տարբեր

մեթոդիկաներից՝ խոսքի զարգացման, տարրական մաթեմատիկական

պատկերացումների ձևավորման, կերպարվեստի, երաժշտության, կառուցողական գործունեության, էկոլոգիական և ֆիզիկական դաստիարակության: Պարապմունքի

ընթացքում կիրառվում է նաև ինտելեկտուալ քարտի մեթոդը:

Ինտեգրված պարապմունք

Խոսքի զարգացում և կառուցողական աշխատանք (օրիգամի)

Թեման՝ «Բարեկիրթ խոսք»

Նպատակը՝

.երեխաներին սովորեցնել ձևակերպել խնդրանք, բարեկիրթ բառեր և արտահայտություններ գործածել և բարեկիրթ վարքագիծ դրսևորել,

. սովորեցնել թղթի ծալումներով պատրաստել շնիկ ,

. հետևելով 3 և ավելի քայլերից բաղկացած հրահանգներին՝

կատարեն տրված առաջադրանքը,

. սովորեցնել աշխատել՝ համագործակցելով, միմյանց աջակցելով և նոր

մտքեր առաջարկելով:

Անհրաժեշտ նյութեր.

• A4 չափսի թղթեր երեխաների թվով,

• մեծ պաստառ՝ բլրի նկարով, որի հետևից ծուխ է դուրս գալիս, իսկ

առջևի մասում՝ մեծ ու փոքր շան պատկեր (նկարված կամ ամրացված),

• կպչուն ժապավեն

Պարապմունքի ընթացքը.

Երեխաները նստած են սեղանների շուրջ: Պաստառը փակցված է բոլոր երեխաների համար տեսանելի տեղում:

Խթանման փուլ

Դաստիարակը հարցնում է երեխաներին.

- Երեխանե՛ր, ովքե՞ր են տանը շնիկ պահում, կամ ի՞նչ հետաքրքիր

պատմություններ եք լսել շնիկների մասին:

Պատմեք ձեր կողքին նստած ընկերոջը:

Երեխաները պատմում են միմյանց իրենց պատմությունները:

Աշխատանքի ընթացքում դաստիարակը մոտենում է զույգերին՝ ընթացքին հետևելու համար: Այնուհետև 2 կամ 3 երեխայի խնդրում է ամբողջ խմբին պատմել իր ընկերոջ պատմածը:

Աշխատանքի տևողությունը՝ 3-4 րոպե:

Իմաստի ընկալման փուլ

Դաստիարակ - Հիմա ես ձեզ կպատմեմ մի հեքիաթ շնիկի մասին:

Լինում է չի լինում մի շնիկ է լինում: Մի օր նա փախչում է տնից: Գնում, գնում, հասնում է մի բլրի, որի վրա բազմաթիվ գույնզգույն ծաղիկներ կան:

Շնիկն ուզում է բարձրանալ բլրի վրա, բայց անընդհատ սահում և ընկնում

է: Հանկարծ նա տեսնում է մի մեծ շուն:

Փոքրիկ շնիկը հարցնում է մեծ շանը.

- Ո՞ւր եք գնում:

Մեծ շունը պատասխանում է.

- Գնում եմ ճանապարհորդության:

- Որ խնդրե՜մ, ինձ էլ կտանե՞ք ձեզ հետ:

- Իհա՜րկե, այդքան բարեկիրթ շնիկին ինչպե՞ս կարող եմ ինձ հետ

չտանել: Գնացի՛նք:

- Ի՜նչ լավ է. – ուրախությունից ցատկոտում է շնիկը:

Ֆիզ դադար. «Գնում ենք ճանապարհորդության»

Խաղը վարում է դաստիարակը: Երեխաները կանգնում են շարքով,

մեկը մյուսի հետևից: Խումբը «գնում է ճամփորդության»՝ ճանապարին

հաղթահարելով տարբեր երևակայական արգելքներ՝ մեծ քար, առվակ, ջրափոս, հաստաբուն ծառ, խիտ թփուտներ և այլն: Արգելքների

«հաղթահարումը» ցույց տալու համար դաստիարակն ու երեխաները

տարբեր շարժումներ են կատարում. ցատկում են, քայլում են կռացած և

այլն:

Խաղի ավարտից հետո երեխաները նորից նստում են սեղանների

շուրջը: Դաստիարակը, մատնացույց անելով պաստառը, ասում է.

- Երեխաներ, ի՞նչ եք կարծում, ո՞ւր կգնան այս շները միասին: Երեխաներից մի քանիսի պատասխանները լսելուց հետո դաստիարակն ասում է.

- Եկեք միասին շնիկներ պատրաստենք և թող մեր շնիկներն էլ նրանց

հետ գնան ճանապարհորդության:

Երեխաները, հետևելով հրահանգներին, թղթի ծալումների հերթագայմամբ կատարում են աշխատանքը: Աշխատանքի ընթացքում դաստիարակը մոտենում և աջակցում է օգնության կարիք ունեցող երեխաներին:

Կշռադատման փուլ

Երբ բոլորն ավարտում են աշխատանքը, դաստիարակը հարցնում է.

- Երեխաներ, ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս դիմենք նրանց, որ մեր շնիկներին էլ իրենց հետ տանեն:

Երեխաները հերթականությամբ մոտենում և խնդրանքով դիմում

են պաստառի շներին, որպեսզի նրանք իրենց շնիկներին էլ տանեն

ճամփորդության:

Այս փուլում դաստիարակին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել,

որպեսզի երեխաները կարողանան ձևակերպել խնդրանքը, գործածեն

դիմելու բարեկիրթ ձևեր, օրինակ՝ այսպիսի տարբերակներ.

- Խնդրու՛մ եմ, իմ շնիկին էլ ձեզ հետ տարեք:

- Եթե խնդրե՛մ, իմ շնիկին էլ կտանե՞ք ձեզ հետ:

- Ես ձեզ շատ եմ խնդրում, որ իմ շնիկն էլ ձեզ միանա:

Երեխաներն իրենց շնիկներն ամրացնում են պաստառին:

Վերջում դաստիարակը խրախուսում է բոլորին:

Դիտորդների վերլուծություն

Լսեցի պարապմունքը և շատ հիացած եմ աշխատանքով : Դաստիարակի արտաքին տեսքը շատ գեղեցիկ և հմայիչ էր, որը կարևոր և պարտադիր պայման է ,

պարապմունքը գեղեցիկ , գրագետ վարելու համար : Պարապմունքին անհրաժեշտ դիդակտիկ նյութերը առկա էին : Շատ գեղեցիկ կազմակերպվեց խմբակային աշխատանքը : Ճիշտ տեղում կատարվեց ֆիզկուլտ դադար և խաղը նպաստեց խմբի աշխուժացմանը , որի ժամանակ էլ մանակից եղան բոլոր երեխաները : Դաստիարակը օգնեց օգնության կարիք ունեցող երեխաներին գեղեցիկ միջամտությամբ : Հետևեց , որ ճիշտ առոգանությամբ , ճիշտ շեշտադրմամբ ձևակերպեն բարեկիրթ խոսքը:Վերջում բոլոր երեխաները խրախուսվեցին : Դաստիարակը հասավ իր նպատակին : Շատ ճիշտ կառուցված և ուսանելի պարապմունք էր :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ելնելով կազմակերպված և անցկացված հետազոտական աշխատանքի արդյունքից և տվյալներից՝ կարող եմ եզրակացնել, որ ավագ նախադպրոցականների մտավոր, իմացական կարողությունների զարգացմանն ու ակտիվացմանը մեծապես նպաստում են այդ ուղղությամբ մշակված համալիր և ինտեգրված պարապմունքները:

Ապահովելով միջառարկայական կապերը ՝ մշակված ինտեգրված պարապմունքները նպաստում են երեխաների մտավոր կարողությունների զարգացմանը:

Հետազոտություն իրականացնելիս նախադպրոցականների ճանաչողական հետաքրքրությունների և մտավոր զրագացման մակարդակները տեսակավորեցի երեք մակարդակով՝ բարձր, միջին, ցածր:

Բարձր մակարդակ: Բնորոշվում է մտավոր ակտիվացման, ճանաչողական ակտիվության,վերլուծելու և եզրակացություններ կատարելու կարողության բարձր մակարդակով: Երեխայի խոսքն այս մակարդակում արտահայտիչ է, նա դրսևորում է ճանաչողական ակտիվ հետաքրքրություն շրջապատող աշխարհի հանդեպ: Զարգացած է տրամաբանական մտածողությունը:

Միջին մակարդակ: Երեխան դրսևորում է ճանաչողական հետաքրքրություն, բայց իր մտքերը խոսքով արտահայտում է ոչ լիարժեք: Հասկանում է պարապմունքի կարևորությունը, բայց ոչ միշտ է ճիշտ կողմնորոշվում հանձնարարություններում:

Ցածր մակարդակ: Բնորոշ է ցածր մտավոր ակտիվությունը՝ տրամաբանական մտածողության թերզարգացումը, հաճախ՝ բացակայությունը, խոսքը կապակցված չէ, չի կարողանում արտահայտել այն, ինչ ուզում է:

Երեխաների հետ կատարած հետազոտական աշխատանքի ընթացքում պարզ դարձավ, որ նրանց մոտ գերակշռում էր մտավոր զարգացման միջին մակարդակը, ուստի նրանց ճանաչողական հետաքրքրությունների մակարդակի բարձրացման նպատակով պլանավորվել և անցկացվել են մի շարք ինտեգրված պարապմունքներ:

Գրականության ցանկ

1.Ինտեգրված կրթություն Վիքիպեդիա

2.«Ինտեգրումը կրթական գործընթացում » - Փնջոյան Տ.-2018թ.

3. Հ. Միտոյան, Լ. Սմբատյան՝ <<Ուսումնական ձեռնարկ>>, Երևան 2010:

4.Ս.Մարության,Ա.Դալլաքյան<<Նախադպրոցական մանկավարժություն>>, բուհական դասագիրք, Երևան 2008:

5. <<Նախաշավիղ>>, 2009:

6.Ա. Հովհաննիսյան, Ս. Մարության, «Պարտեզ» նախադպրոցական կրթական

ծրագիր, Եր., 2008:

7. 3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մոդելներով

Դաստիարակի ուղեցույց Երևան 2018